Արձանագրություն 5

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-24/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 07.11.2024թ. ժամը 17:30-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ա. Ղազարյան – ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ

Ա. Սարդարյան - ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

Ս. Սիմոնյան - ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի օգնական,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան – ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ,

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Կ. Ղուկասյան - ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական,

Ա. Հունանյան - ՀՀ ֆինանսների նախարարության ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական:

<u>1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին</u>

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիտարկել «Լուսինե Մարտիրոսյան Միսաքի» ԱՁ-ի կողմից ներկայացված գրությունը՝ անհրաժեշտության դեպքում կատարելով համապատասխան փոփոխությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հաշվի առնելով բարձրացված հարցի քննարկման անհրաժեշտությունը հանձնաժողովի բոլոր անդամների հետ՝ հանձնաժողովը որոշեց՝

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը մինչև 08.11.2024թ. ժ. 11:30:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-24/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի նոյեմբերի 8-ին ժամը 11:30-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Ղազարյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Սարդարյան

_____ Ս. Սիմոնյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան

Արձանագրություն 6

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-24/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 08.11.2024թ. ժամը 11:30-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ա. Ղազարյան – ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ

Կ. Ղուկասյան - ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական,

Ա. Սարդարյան - ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

Ա. Հունանյան - ՀՀ ֆինանսների նախարարության ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական,

Ս. Սիմոնյան - ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի օգնական,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան – ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ

<u>1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին</u>

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիտարկել «Լուսինե Մարտիրոսյան Միսաքի» ԱՁ-ի կողմից ներկայացված գրությունը՝ անհրաժեշտության դեպքում կատարելով համապատասխան փոփոխությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Տեղեկություններ ստացված գրության վերաբերյալ

«Լուսինե Մարտիրոսյան Միսաքի» ԱՁ-ի կողմից 06.11.2024թ. ստացվել է գրություն առ այն, որ վերջինս համաձայն է գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումների հետ, սակայն նախորդ նիստին արձանագրված փաստը, որ ըստ գնահատող հանձնաժողովի՝ մասնակցի կողմից ներկայացվել են կեղծ փաստաթղթեր (հաշիվ-վավերագրերի մասով), չի համապատասխանում իրականությանը, այն պարզապես հանդիսացել է աշխատանքային փաստաթուղթ, որը սխալմամբ է ներկայացվել, խնդրում է ներկայացված հաշիվ-վավերագիրը համարել չներկայացված:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հիմք ընդունելով «Լուսինե Մարտիրոսյան Միսաքի» ԱՁ-ի կողմից 06.11.2024թ. ներկայացված պարզաբանումը՝ հանձնաժողովը որոշեց՝

1. «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-24/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 05.11.2024թ. ժ. 10:00-ի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի «1. Տեղեկություններ հայտում առկա անհամապատասխանությունների, ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ» բաժնի վերջին պարբերության «մասնակցի կողմից ներկայացվել են կեղծ փաստաթղթեր» բառերը փոխարինել «մասնակցի կողմից ներկայացվել են հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր» բառերով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	Ա. Ղազարյան
Հանձնաժողովի անդամներ՝	_____	Կ. Ղուկասյան
	_____	Ա. Սարդարյան
	_____	Ա. Հունանյան
	_____	Ս. Սիմոնյան
Գնումները համակարգող՝	_____	Ա. Աղաբաբյան